

**ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի ուղերձը
մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ**

Սիրելի հայրենակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրվա առթիվ:

Այս տոնը խաղաղ ապրելու և արարելու, մեր ազատատենչ ժողովրդի անկտրում կամքի ու հաղթական ոգու, հայրենիքին անձնուրաց նվիրվածության ու հավատարմության, ինքնության և հարատևության համար պայքարող հայ ժողովրդի հաղթանակների խորհրդանիշն է:

Անմոռանալի է հայ ժողովուրդի ներդրումը երկրորդ համաշխարհային պատերազմում՝ ֆաշիզմի դեմ տարած մեծ հաղթանակի գործում:

Հայ ժողովրդի համար հատկապես մեծ է նաև մեր նորօրյա հաղթանակների՝ արցախյան ազատամարտում գրված հերոսական էջերի, սխրանքների նշանակությունը: Մերօրյա պատմության մեջ այդ հաղթանակների պսակը Շուշիի ու Արցախի ազատագրումն էր: Այս պատերազմում մեր հաղթանակը մեկ անգամ ևս վկայեց սերնդեսերունդ փոխանցվող հայի ազատատենչ ոգու, հպարտության և վճռականության հարատևության մասին:

Փառք ու պատիվ հայրենիքի ազատության, այսօրվա խաղաղության համար մարտնչած ու հաղթանակած հայ քաջորդիներին, անմահություն հայրենիքի համար կյանքը նվիրաբերած հայ նահատակներին:

Կրկին շնորհավորելով տոնի առթիվ՝ մաղթում եմ ձեզ խաղաղ երկինք, քաջառողջություն ու բարեկեցություն:

Թող մեր փառապանծ հաղթանակները զորավիգ լինեն մեզ՝ մեր խաղաղ և հուսալի վաղվա օրը կերտելու ու մեր անկախ պետականության ամրապնդման գործում:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան

08.05.2012թ